ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան 23 նոյեմբերի 2022թ.

«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Հրատարակիչ»), ի դեմս տնօրեն Սաբեթ Հովհաննիսյանի, մի կողմից, որը գործում է ըստ կանոնադրության հիման վրա, և Անի Բաղդասարյանը (այսուհետ՝ «Հեղինակ») մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը Հրատարակչին է փոխանցում «Եկ նվագենք դաշնամուր» ձեռնարկի (այսուհետ՝ «Ստեղծագործություն») օգտագործման բացառիկ իրավունք, հետևյալ ձևերով՝

1.1.1. Ստեղծագործության որոշակի քանակով մեկանգամյա հրատարակում (հրատարակման իրավունք)

1.1.2. Ստեղծագործության հրատարկված նմուշների հետագա տնօրինման տրամադրում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը (տրամադրման իրավունք),

2. Իրավունքի հանձնման ժամկետը

Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները Հեղինակի կողմից փոխանցվում են Հրատարակչին 1 (մեկ) տարի ժամկետով՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից հաշված:

3. Իրավունքի կիրառման տարածքը

Սույն պայմանագրի համաձայն, Հրատարակիչը իրավունք ունի իրեն հանձնված իրավունքները օգտագործել Հայաստանի Հանրապետության տարածքում:

4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործութան օգտագործման համար Հրատարակիչը պարտավորվում է վճարել 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով գումար՝ Ստեղծագործության համապատասխան օգտագործման համար:

4.2. Վճարումը կատարվում է միանվագ՝ նախքան հրատարակումը իրականացնելը:

4.3. Հրատարակիչը պարտավորվում է Հեղինակի պահանջով ներկայացնել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են սույն պայմանագրի 4.1. կետով նշված Հեղինակին հասանելիք վճարի չափը որոշելու համար:

4.4. Վճարումը ուշացնելու դեպքում Հրատարակիչը Հեղինակին վճարում է տույժ՝ ուշացված վճարվելիք գումարի 0.005 տոկոսի չափով, վճարման ուշացման յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԵՂԻՆԱԿ

Անի Բաղդասարյան
հասցեն՝ ք. Երևան, Սունդուկյան 21, բն. 6
նույն. քարտ՝ 011547403
տրվ.՝ 14.06.2021թ., 004-ի կողմից
ս. ք.՝ 770419840711

Ա. Բաղդասարյան

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ
Երևան-9, Տերյան-91,
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660006222810100

ՏՆՕՐԵՆ՝ Ս. Հովհաննիսյան